





122
K-36

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐԱԼԻ ԿՈՆԿԼԱՎԻ

արձանագրություն



ԽԻԶԱԽ ՍԱՊՈՐ
ԿԱՐՄԻՐԱՆԱԿՅՈՒՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԽԱԽԱՄՅԱՆ



ԽԵԶԱՆ ՍԱՊՅՈՐ

Կարմիրքանակային

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԽԱՆԱՄՅԱՆ

1943 թվականի սեպտեմբերի 29-ին սապյոր Հարություն Խա-
խամյանն արդեն կանգնած էր Դնեպրի ձախ ափին:

Ահա նա — Ուկրաինայի ջրառատ դեմը, որին գովերգել է Նի-
կոլայ Գոգոլը և Տարաս Շևչենկոն:

Քանի՜-քանի՜ անգամ Հայրենական պատերազմի հերոս սապյոր
Միկոլայ Կոլիչկոն՝ կարմիրքանակային Հարություն Խախամյանի
մտերիմ ու սիրելի ընկերը նրան պատմել էր Դնեպրի մասին: Նա,
այդ խիզախ սապյորը և կենսուրախ ուկրաինացին իր դարձերով,
պատմածներով ու երգերով սեր էր դարձնեցրել ընկերով սրտում:
Շվ Խախամյանը դեռ չտեսած, գիտեր ու սիրում էր այդ հզոր
դեմը:

Տասը ամիս տեղի նրանց ընկերությունը, որ սկսվել էր Թեյե-
քի ափերին և խզվեց Դնեպրի ափը հասնելու ժամանակ: Այն
Դնեպրի, որն այնպես սիրում էր Միկոլայ Կոլիչկոն: Հսկա դեմը
կոխով անցնելուց մի քանի օր անց թշնամու դիպակով մահացու
վերափոխվեց խիզախ Կոլիչկոն:

Մահից առաջ վերափոխ Հայրենասերը մի վերջին անգամ հար-
ցրեց իր ընկերոջը.

— Արտյուշա, դու կանցնե՞ս Դնեպրի աջ ափը:

Խախամյանը ոչինչ չկարողացավ առել՝ այնպես չուտ հանդեպ
վերափոքը, սակայն մեռնողը հասկացավ, որ իր ռազմիկ ընկերը
կհատարի իր նվիրական ցանկությունը:

Սապյորներին հրամայված է. այսօր դիչերվա մութ ժամին
նավակներով անցնել Դնեպրը և այնտեղ՝ աջ ափին ամրանալ: Մա-
յորը մի ստորաբաժանման հրահանգ ամեն դեպքում կազմակեր-
պելու համար. նրանց մեջ էր Խախամյանը:

Վրա հոտով նշանակված ժամը... Սապյորները կազմ-պատ-
րաստ կանգնած էին իրենց տեղերում: Մութ ու ցուրտ դիչերով
նրանք անյան Դնեպրը: Մեծ անհանդուրժյուն կար դեռի ափե-
րին ու շրջեր վրա. թնդանոթների որոտը, ականների պայթյուն-
ների ու դիպակների ճարձատյունը խառնվել էին միմյանց:

Քանի գնում, այնքան մոտենում էին սապյորների նավակները
հանդիպահած աջ ափին: Ահա և ուղղաձիգ իջնող ափը: Նրանք
չտապով դուրս ցատկեցին ավազուտի վրա: Այնտեղ, վերելում
կրակում էին գերմանացիները, սակայն դա սովորական ու ամե-
նօրյա բան էր այն սապյորների համար, որոնք պատերազմի
երկու տարվա ընթացքում տեսել էին դրանից ոչ պակաս բարդ
վրձակներ:

Միայն մի միտք էր պտտւում Սախամյանի ուղեղում — ճշտիվ կատարել հրամանատարի տված հրամանը, չկորցնել այնքան սուղ ժամանակը և մինչև լուսարաց գոնե մի փոքրիկ զինագաշտ դրաւիկ ու ամրանալ Դնեպրի աջ ափին:

Փաշխտենեբը սակայն շատ շուտով հայտարեցին նրանց, զե՛ր իրենք կարմիրբանակայիններն էլ հանդիստ չմնացին իրենց տեղում. ուղեմիկները ակաթի զործողութայիններն անցան՝ զինագաշտն քնդարձակելու համար: Ինչպես նախընթաց կռիւներին, այնպես էլ հիմա Սախամյանին թույլ չտվին, որ առաջ գնա: Դե ինչ անենք, սապյորի զործն էլ այն է, որ նա հարձակումից առաջ ճանապարհ բացի տանկերի ու հետեակազորի համար, իսկ երբ թշնամին փախավ — սապյորը պետք է ավարտի կիսատ աշխատանքները, նոր հարմարեցումներ չինի, սարքի, օրպեսզի զորքը անարգել առաջանալ կարողանա:

Այսպես մտածում էր սապյորը: Սակայն նա այսպես մտածեց այն բաղկին միայն, երբ նազմատենչ արամազրությամբ լարված աշխատում էր: 26-ամյա ջահել սապյորը մինչև հոգու խորքը ատելով զերմանացուն, լավ դիտեր, որ զորքերն առանց աշխատանքի ու կայունության հաղթություն ձեռք չեն բերի:

Այդպես և հիմա էր. ժամեր շարունակ Դնեպրի ափամերձ ջրերի մեջ կանդնած նա աշխատում է և ընկերների հետ նավակազմատույց է կառուցում գետանցի համար:

Կարմիրբանակային Հարություն Սախամյանը շատ անգամ էր աշխատել զետերի մեջ: Նա կամուրջներ ու դեռանցման հարմարություններ էր շինել Թերեքի, Կուբանի ու Դոնի ափերին: Սակայն ի՞նչ համեմատություն... Այն, ինչ նա քաշեց Դնեպրի սուղ ջրերում, դա աներեակայելի էր և երբեք չէր վիճակվել նրան: Սապյորներն աշխատույց էին զերմանացիներն անընդհատ կրակի տակ: Նրբամի նրան թվում էր, որ այդ հոկտեմբերյան զիշերը վերջ չունի և ինքը ամբողջ հալիտենություն կանդնած է ջրի մեջ: Սուր ցավը բռնեց նրա ողջ մարմինը... Այդպես հարկ եղավ աշխատել շատ ժամեր՝ մինչև լուսարաց: Ճիշտ է, Սախամյանը չէր հաշվում ժամերը — նա չէր էլ նկատում, թե ինչպես է անցնում ժամանակը, նա մոռացել էր ինչ է հաշիվը: Բայց մի բան լավ դիտեր նա, որ պետք է ավարտել զեռանցի աշխատանքները, պետք է ճիշտ ժամին ապահովել առաջադրանքը, պետք է ինչ գնով էլ լինի ամրանալ ու դիմանալ աջ ափին: Դա նշանակում էր — նորից այնքան կանդնել ջրի մեջ, մինչև որ զորքը գլուխ դա:

Կարմիրբանակային Սախամյանի ընկերները մի քանի անգամ ափ դուրս եկան, օրպեսզի գոնե փոքր ինչ տաքանան: Եվ նրանք ամեն անգամ նորից ջուրն էին մտնում, տեսնելով, թե ինչպես իրենց ընկերը — նույնպիսի մի ուղեմիկ, ինչպես իրենք, չի էլ մոտենում թաղնի իր մարտական զիրքը... Եվ նորից նոր թափով ու ողեմփորությամբ ետում էր աշխատանքը:

Իսկ առավոտյան, երբ կառուցումն ավարտված էր և ժրպան սապյորները հրաման ստացան հանդստանալու, պարզվեց, որ կարմիրբանակային Սախամյանը ութը ժամ շարունակ կանդնած

աշխատելիս է եղել դնեպրյան սառը ջրերի մեջ: Նա հաղթահարել էր մարդկային թուլությունը: Նա ընկճել էր հոգնածությունն ու անքնությունը: Կարմիր Բանակի բոլոր զորքերի հետ միասին Ուկրաինական ռազմաճակատում նա հաղթահարել էր Դնեպրի լայնքը...

Նավահամատույցը կառուցեցին: Հաղթել էր համառությունն ու վարպետությունը, դիմացկունությունն ու վճռականությունը:

Ֆաշիստները չէին դադարեցնում կրակը: Արևելքի դիպուկ զարկերից գետանցման կառուցումը խորտակվեց:

Իսկույն ստացվեց հրամանատարի հրամանը — անհապաղ վերականգնել քանդվածը: Խախտվածը առաջինը նետվեց ջրերի մեջ: Նորից եռաց լարված աշխատանքը:

Թշնամու հրետաձգությունն առկա գետանցի կառուցումը վերականգնվեց: Այդպես կրկնվեց երեք անգամ: Գերմանացիները քանդում էին գետանցը, սաղյուրները սառը ջուրն էին նետվում, շինում, նորոգում և նորից անցնում էին մեր տանիկերն ու զորքերը, հասնում Դնեպրի աջ, հիմա ալյևս զբաղված ափը:

Խախտվածը երգում էր տվել իր մոտ ընկերոջը՝ Միկոլային, որ նա ոտների, ուկրաինացիների ու դադարների հետ կապահի Դնեպրի աջ ափը:

Նա իր խոսքը պահեց: Այդ ահափոր պայքարը տեղյ ութ օր — 1943 թ. սեպտեմբերի 29-ից մինչ հոկտեմբերի 6-ը Ս. չրջանում, ուր սաղյուր Հարություն Խախտվածը գետանցումներ չինեց և մարտնչեց Դնեպրի աջ ափի համար:

Մեր զորքերը գեպի արևմուտք են գնում: Նրանց հետ միասին, առաջին շարքերում Լենինի չքանչանը կրճքին քայլում է կարմիր-բանակային Հարություն Խախտվածը — Հայաստանի փառապանծ որդին:



ԿԱՐԳԱ ՈՒ ՏՈՒՐ
ԸՆԿԵՐՈՋԻ

Կարմիր Բանակի Գլխավոր
Քաղաքական վարչություն

ГЛАВНОЕ ПОЛИТИЧЕСКОЕ УПРАВЛЕНИЕ КРАСНОЙ АРМИИ.

Название листовки по-русски: Отважный сапёр
красноармеец Арутюн ХАХАМЯН.

Воениздат НКО 1944 г.

НА АРМЯНСКОМ ЯЗЫКЕ.